

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՊԱՀՊԱՆԵԼԻՍ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ
ԱՊԱՀՈՎԵԼԻՍ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՒՂ Ե Ց ՈՒՅ Ց
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՊԱՀՊԱՆԵԼԻՍ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ
ԱՊԱՀՈՎԵԼԻՍ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ոստիկանության ծառայության բնույթը, նրա վրա ազդող գործոնների փոփոխականությունը և դրանով պայմանավորված բարդությունները որոշակի դժվարություններ են ստեղծում ոստիկանության առօրյա գործունեության մեջ: Գործնականում առաջացած իրավիճակի արդյունավետ կառավարման կարևոր ցուցանիշներից մեկը քաղաքացիների հետ անկաշկանդ շփման, պարբերաբար հաղորդակցվելու և դրա շնորհիվ՝ ընդունելի լուծումների շուրջ բանակցելու կարողությունն է: Այս գործընթացը ներառում է ինչպես ոստիկանության և քաղաքացիների միջև ամենօրյա աննշան շփումները, այնպես էլ այն առավել լուրջ իրադրությունները, որոնցում պահանջվում են բանակցություններ վարելու հմտություններ ունեցող հատուկ մասնագիտական վերապատրաստում անցած անձինք, օրինակ՝ պատանդներ պահելու հետ կապված իրավիճակներ, հրազենի գործադրմամբ ուղեկցվող պատահարներ և նման այլ բարդ իրադրություններ:

2. Մարդն առօրյա կյանքի բոլոր ոլորտներում անընդհատ հաղորդակցվում է շրջապատի հետ՝ երկխոսության և բանակցությունների միջոցով: Միջանձնային շփումների հմտությունները, որոնք կապված են անձանց հետ հաղորդակցվելու, բախումնային իրավիճակների հաղթահարման և նման խնդիրների լուծման հետ, կարող են էապես նպաստել ուստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, սակայն բնական է, որ անձանց որոշ մասը առավել լավ է տիրապետում նշված հմտություններին, քան մյուսները:

3. Իրավիճակների կարգավորման և անհատների (անձանց) մեծ ու փոքր խմբերի հետ բանակցելու ընթացքում ճիշտ և նախընտրելի լուծումներ գտնելու համար ուստիկանությունը պետք է ունենա օրենքով ամրագրված համապատասխան լիազորություններ, պատշաճ դասընթացների միջոցով պետք է ապահովվի ուստիկանության ծառայողների ունակությունները՝ ուղղված բանակցություններ վարելու (արդյունավետ շփվելու) և առաջացած խնդիրները հաղթահարելու հմտությունների բարելավմանը:

4. Ուստիկանության յուրաքանչյուր ծառայող՝ ինչպես շարքային անձնակազմը, այնպես էլ վերադաս կամ ավագ պետերը պետք է կարողանան արագ կողմնորոշվել ցանկացած իրադրությունում և գիտակցեն իրենց կրած պատասխանատվության աստիճանը: Իրական կյանքում քիչ չեն այնպիսի իրավիճակները, երբ ուստիկանության ծառայողներից պահանջվում են առավել բարդ և խորքային որոշումներ կայացնելու, ինչու ոչ՝ հանգուցալուծումներ տալու համալիր հմտություններ, ինչպես օրինակ՝ զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգը պահպանելու և հասարակական անվտանգությունը ապահովելու, զինված քրեական խմբավորումներին վնասագերծելու և այլ բարդ հանգամանքներում:

5.«Բանակցություն» տերմինը հավասարապես օգտագործելի է և՛ ոչ պաշտոնական ձևաչափով բոլոր շփումների ժամանակ և՛ բարդ հիմնախնդիրների լուծումներ գտնելու նպատակով անցկացվող պաշտոնական բանակցությունների ընթացքում: Բա-

նակցային գործընթացում կարող են ներառված լինել ոչ միայն ոստիկանության ծառայողները, այլ նաև խնդրով մտահոգ այլ կողմեր կամ շահագրգիռ գործընկերներ: Անկախ նրանից՝ բանակցային գործընթացը պաշտոնական բնույթ է կրում, թե ոչ, առկա խնդիրների և հնարավոր բարդությունների առավել համակողմանի ընկալումը, քաղաքացիների հետ նախապես շփումներ հաստատելուն և փոխըմբռնման հասնելուն ուղղված աջակցությունը և խրախուսումը կարող է միայն մեծացնել ոստիկանության կողմից բնակչությանը տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը:

6. Հայտնի են բանակցություններ վարելու հիմնախնդրի վերաբերյալ տեսական ու գործնական որոշակի մոտեցումներ, ինչպես նաև մի շարք խորհրդատվելի մոդելներ: Ընդհանուր առմամբ, բանակցային գործընթացը հաջորդական գործողությունների ամբողջություն է, որոնք սակայն յուրաքանչյուր իրավիճակում նույն կերպ կիրառվել չեն կարող, ավելին՝ ամեն կոնկրետ դեպքում դրանց հաջորդականությունը ընտրելիս պետք է հաշվի առնվեն ոստիկանության և քաղաքացիների միջև առաջացած հարաբերությունների բնույթը, բանակցությունների նպատակը, օրինակ՝ քաղաքացիների միջև ծագած փոքր վեճը հարթելու համար անհրաժեշտ է դրան նախապատրաստվելու կարճ ժամանակահատված, իսկ զանգվածային անկարգությունների ընթացքում խիստ ազդեալիվ տրամադրված բազմության հետ բանակցություններ վարելու համար հարկավոր է գործողությունների առավել մանրամասն պլան, հետևաբար և՛ նախապատրաստվելու ավելի մեծ ժամանակ:

7. Բանակցային գործընթացը սերտ կապված փոխգործողությունների շարք է, որի շրջանակներում գործընթացի մեկ տարրի (գործողության) արդյունքը իր տրամաբանական ազդեցությունն է ունենում հաջորդ տարրի վրա, այսինքն՝ միանգամից լուծել բոլոր հիմնախնդիրները՝ ռեալ չէ. կարող են պահանջվել բավական ջանքեր նախքան ընդունելի (կոմպրոմիսային) լուծումներ գտնելը, որոնք կբավարարեն ներգրավված բոլոր կողմեր:

րին: Այս իմաստով՝ կարևորվում է ոստիկանության բոլոր ծառայողների վերապատրաստումը և ուղղորդումը՝ ավելի լավ հասկանալու բանակցային գործընթացի էությունը, ինչպես նաև՝ այն ծառայողների ընտրությունը, ովքեր ունեն տվյալ իրավիճակում հաղորդակցվելու և բանակցություններ վարելու առավել կայուն հմտություններ և կարող են ստանձնել ավելի բարդ բանակցային դերեր:

8. Յուրաքանչյուր իրադրությունում երկխոսությունը պետք է նախաձեռնի և անմիջապես փորձի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցություններ վարել՝ ներկա գտնվող այն ոստիկանության ծառայողը, ով ավելի փորձառու է և ունի ամենահամապատասխան հմտությունները: Նպատակահարմար չէ միաժամանակ ոստիկանության մի քանի ծառայողների ներգրավվումը երկխոսության գործընթացին, քանի որ նրանց գործողությունները կարող են անհարկի կրկնվել, ինչը կհանգեցնի անօգուտ «բանավեճի»: Բնական է, սակայն ոչ պարտադիր, որ բանակցությունները նախաձեռնի տվյալ միջադեպին ներկա ոստիկանության ավագ ծառայողը, սակայն փոքր միջադեպերը հարթելիս ոստիկանության ծառայողները անշուշտ չպետք է անորոշ սպասեն իրենց վերադասի ժամանմանը և նոր միայն սկսեն բանակցային գործընթացը:

9. Թեև ոչ բոլոր բանակցություններն են անմիջապես պսակվում հաջողությամբ, այդուհանդերձ՝ հաղորդակցման արդյունքում ոստիկանության ծառայողների և քաղաքացիների միջև հարաբերությունները առնվազն չպետք է լարվեն. ոստիկանության ծառայողները պետք է գիտակցեն, որ բանակցությունների ընթացքը նույնքան կարևոր է, որքան վերջնական արդյունքը:

10. Բանակցությունը այնպիսի գործընթաց չէ, որը սկիզբ է առնում այն ժամանակ, երբ ինչ-որ բան սխալ է ընթանում կամ առկա է լարվածություն: Ոստիկանական ժամանակակից և որակյալ ծառայությունների մատուցման շրջանակներում ոստիկանության ծառայողները պետք է ամենամյա ձևաչափով նախապես գործընկերային հարաբերություններ հաստատեն հասարա-

կական այն բոլոր խմբերի (կողմերի) հետ, որոնց կողմից հավանական է տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը, ավելին՝ փորձել հաղորդակցվել այն խմբերի հետ, որոնք հատկապես անհանդուրժողական են տրամադրված ոստիկանական միջատության նկատմամբ: Անկախ նրանից, հիշյալ խմբերը խաղաղ գործելակերպ են ընտրել թե տրամադրված են ագրեսիվ, ոստիկանության ծառայողները պետք է հավասարապես շփվեն բոլորի հետ և կանխեն խնդրահարույց իրավիճակները: Ապագայում հնարավոր բանակցությունների ընթացքում ցանկալի արդյունքի հասնելու համար հիշյալ շփումները և բարի դրացիական հարաբերությունները շատ կարևոր են:

II. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

11. Մույն ուղեցույցի նպատակն է ոստիկանական առօրյա գործունեության ընթացքում և բնակչությանը ծառայություններ մատուցելիս ոստիկանության ծառայողներին տրամադրել գործնական ուղենիշներ՝ քաղաքացիների հետ հաղորդակցման, շփումների հաստատման և բանակցություններ վարելու հմտությունների ամրապնդման ուղղությամբ:

12. Ուղեցույցը նախատեսված է թե ոստիկանության այն ծառայողների համար, ովքեր իրենց ամենօրյա պարտականությունների շրջանակներում պարբերաբար շփվում են քաղաքացիների հետ, և թե ոստիկանության այն ծառայողների համար, որոնցից պահանջվում է ինքնաբուխ կամ պլանավորված, առավել լուրջ կամ բարդ գործողությունների ժամանակ ստանձնել ակտիվ բանակցություններ վարողի դերը:

13. Ուղեցույցում ներկայացված են հեշտ կիրառելի մոտեցումներ հաղորդակցության և բանակցությունների բարդ գործընթացների համար, ինչպես նաև՝ գործնական օրինակներ և նկատառումներ, որոնք կմեծացնեն թե ինքնաբուխ միջադեպերի և թե

պաշտոնական բանակցությունների ընթացքում հաջողության հասնելու հնարավորությունները:

14. Ուղեցույցում ներկայացված սկզբունքները հավասարապես կիրառելի են ինչպես առօրյա միջադեպերին (պատահարներին) կամ միջոցառմանը ներգրավված ոստիկանության փոքրաթիվ ծառայողների կողմից, այնպես էլ բարդ իրադրություններում կամ զանգվածային անկարգությունների ժամանակ մեծ թվով ոստիկանության ծառայողների ներգրավմամբ հատուկ օպերացիաներ կազմակերպելիս. տարբերությունը կայանում է կոնկրետ իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու ժամանակահատվածի, գործողությունները արդյունավետ պլանավորելու և ստանձնող պատասխանատվության մակարդակների մեջ: Մասնավորապես, բարդ միջոցառումների և զանգվածային անկարգությունների ժամանակ բանակցություններ վարելու վերաբերյալ ներառված են մի շարք ենթաբաժիններ, որոնք ուղղված են կայուն հարաբերությունների ձևավորմանը, կազմակերպիչների ներգրավման մեթոդներին, դժգոհ խմբերի հետ հաղորդակցվելու եղանակներին, բանակցությունների ընթացքը պլանավորելուն, այլ ոչ թե անհրաժեշտության դեպքում սուկ արձագանքմանը: Սույն ուղեցույցը կնպաստի բանակցությունների թե արդյունավետ պլանավորմանը և թե սահուն անցկացմանը բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ գան անկանխատեսելի և բարդ իրավիճակներ:

15. Հաղորդակցության և բանակցությունների գործընթացի համար՝ ընդհանուր մոտեցման իմաստով առկա չէ որևէ առանձին իրավական ակտ կամ ոստիկանական ներքին գերատեսչական ակտ, այսինքն՝ ոստիկանապետի հրաման, որում սահմանված լինի ոստիկանության ծառայողների դերն այս ոլորտում: Սա ուղղակի «ոստիկանություն-քաղաքացիներ» սովորական շփում է՝ դրանից բխող առօրյա հարաբերություններով:

16. Առավել բարդ իրավիճակներում, ինչպես օրինակ՝ զանգվածային անկարգությունների ժամանակ պետք է շահագրգիռ կողմերի աջակցությամբ նախապես պլանավորել չնախա-

տեսված հանգամանքներում գործելակերպը. օգտակար կլինի կողմերի միջև Փոխըմունման հուշագրի պատրաստումը, որպեսզի անհրաժեշտության պարագայում բոլոր ներգրավված կողմերը հստակ փոխհամագործակցեն միմյանց հետ և յուրաքանչյուր կազմակերպության դերն ու արձագանքման պարտավորությունը նախապես հայտնի լինի:

17. Տեղեկատվական հոսքերի և ոստիկանական մարտավարության թափանցիկությանը պետք է պարբերաբար ուշադրություն դարձվի, մասնավորապես՝ ապահովվի վերջիններիս առջև դրված խնդիրների և նպատակների օրենսդրական ամրագրումը: Բանակցային գործընթացին աջակցելու նպատակով կարող են կիրառվել նաև հեռահաղորդակցության տարբեր միջոցներ (հեռուստատեսային եթերի միջոցով դիմումը ժողովրդին, սոցիալական ցանցերում և նմանատիպ կայքերում հասարակական ընկալման նկատմամբ մշտական դիտարկումներ սահմանելը, անհրաժեշտության դեպքում ոստիկանության ուղերձի տեղադրումը այդ ցանցերում, որի համար պետք է առկա լինեն իրավական հիմքեր կամ նախապես համաձայնություն ձեռք բերվի կապուղիների մատակարարների հետ և այլն): Չնայած այս գործելաոճը հասարակական խմբերի հետ հաղորդակցվելու ժամանակակից մոտեցում է՝ խաղաղ լուծումների միջոցով կարգավորել առկա խնդիրները, այդուհանդերձ՝ ազգային օրենսդրությունն ու մարդու իրավունքներին և ազատություններին անմիջականորեն առնչվող որոշումները պետք է լինեն մշտական վերահսկողության տակ, օրինակ՝ հասարակական անվտանգության ապահովման և անհրաժեշտ ապացույցների հավաքման նկատառումներից ելնելով՝ տարածված պրակտիկա է անցկացվող միջոցառումների տեսաձայնագրումը, սակայն այն պետք է վերահսկվի պատշաճ կերպով: Մարդու իրավունքների խախտումներ արձանագրվել են այն ժամանակ, երբ հիշյալ գործընթացը կատարվել է ոչ պատշաճ մոտեցմամբ կամ քննությունից հետո պարզ է դարձել, որ տեսագրվել են բոլորովին կողմնակի անձինք:

III. ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ

ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջոցառում - ընդհանուր տերմին է, որի ներքո հասկացվում է պատահար, միջադեպ կամ իրադարձություն.

Ոստիկանական մշակույթ - որոշակի գործողությունների կամ խմբերի նկատմամբ ոստիկանությունում առկա պատկերացումները, տեսակետերը, վերաբերմունքը և գործելակերպը.

Փոխըմբռնման հուշագիր - գործունեության որոշակի ուղորտներում շահագրգիռ կողմերի միջև փոխադարձ համագործակցության վերաբերյալ կնքված համաձայնագիր, որում սահմանված են կողմերի դերն ու պատասխանատվությունը, (օրինակ՝ բանակցությունների կամ զանգվածային անկարգությունների ժամանակ).

Զանգվածային անկարգություններ - զանգվածային գործողությունների կազմակերպում, որոնք ուղեկցվում են բռնություններով, ջարդերով, հրդեհներով, ավերածություններով կամ գույքի վնասմամբ՝ հրազենի, պայթուցիկ նյութերի կամ սարքերի կիրառմամբ կամ իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով.

Երկխոսություն - երկու կողմերի միջև գրավոր կամ բանավոր քննարկումներ.

Բանակցություններ - երկխոսություն երկու կամ ավելի անձանց միջև՝ նպատակաուղղված փոխըմբռնման ձեռքբերմանը, առկա տարաձայնությունների վերացմանը կամ գործողությունների արդյունքում համաձայնության ձեռքբերմանը:

Կոչ – հորդոր, խնդրանք, համոզելուն ուղղված բանավոր կամ գրավոր խոսք:

IV. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

18. «Հաղորդակցություն» և «բանակցություն» տերմինները իրենց իմաստներով փոքր-ինչ տարբերվում են միմյանցից: Հաղորդակցությունը մարդկանց միջև փոխհարաբերության տարատեսակություն է՝ բանավոր, գրավոր, տեսողական, ձայնագրային և այլն, մինչդեռ բանակցությունը երկխոսություն է երկու կամ ավելի անձանց միջև, որոնք փորձում են հասնել փոխըմբռնման, վերացնել տարաձայնությունները կամ համատեղ գործողությունների արդյունքում գալ ընդհանուր հայտարարի: Ասվածից հետևում է, որ այս դեպքում առկա է հիմնախնդիր, որի լուծումը հնարավոր չէ սոսկ հաղորդակցության (քննարկման) միջոցով:

19. Անշուշտ, ուստիկանական առօրյա ծառայության ժամանակ, երբ իրադարձությունները զարգանում են շատ արագ, «հաղորդակցություն» և «բանակցություն» տերմինները դառնում են հոմանիշներ, այսինքն՝ նույն գործողությունը, մինչդեռ պլանավորված միջոցառումների կամ լուրջ իրադարձությունների ժամանակ (օր.՝ զանգվածային անկարգություններ) առկա է տեղեկատվություն հավաքելու ժամանակ՝ ի նպաստ բանակցությունների արդյունավետ անցկացման և գործողությունների պլանի մշակման:

20. Այս նկատառումներից ելնելով՝ սույն ուղեցույցի VI-րդ բաժինը բաժանված է երկու մասի, սակայն երկու մասերն էլ հանդես են գալիս միասնական ամբողջության մեջ: Միակ տարբերությունը շփումների բարդության մակարդակն է և այն ժամանակահատվածը, որն առկա է բանակցություններին նախապարաստվելու համար: Մոտեցումները, նկատառումները և լուծումների տրամաբանությունը ճշտությամբ համընկնում են:

21. Սույն ուղեցույցում ներկայացված է 6 քայլանոց մոդել, որը ներառում է մի շարք գործնական և տեսական մոտեցումներ, որոնց շրջանակներում, կախված որոշակի հանգամանքներից,

«բանակցություններ վարող անձը» կցուցաբերի «ճկունություն» և շեշտադրում կանի այդ քայլերից որոշակիների վրա:

22. Բանակցությունը ներառում է տեղեկատվություն հաղորդելու, կարծիքներ արտահայտելու, մտահոգությունները ներկայացնելու բազմաթիվ մակարդակներ, որի նպատակներից է քննարկումներում ներգրավել ոստիկանության ծառայողներին: Սա նորմալ պրակտիկա է և հանդիպում է ցանկացած տիպի բանակցությունների ընթացքում, օրինակ՝ պետք է հստակ պատկերացնել, որ զանգվածային անկարգությունների ժամանակ բարձրախոսով ամբոխին կոչով դիմելը՝ հորդորելով զերծ մնալ հակաիրավական վարքագծից կամ այլ ապօրինի գործողություններից, դեռևս բանակցություններ վարել չէ և կարող է ընկալվել որպես հարկադրող երկխոսություն, ինչը ավելի է գրգռում ամբոխին և, հավանական է, որ կխաթարի բանակցությունների ընթացքը կամ դրանց հնարավորությունը: Միաժամանակ, եթե վերը նշված հորդորները ոստիկանության ծառայողները առանձին ուղղում են անկարգությունների կազմակերպիչներին կամ ագրեսիվ տրամադրված խմբերի ներկայացուցիչներին և քննարկումների միջոցով նրանց մատնանշում գործողությունների անիրավաչափությունը, ապա այս երկխոսությունը կարող է գնալ կառուցողական ուղղությամբ, ունենալ դրական արդյունք և կդիտվի որպես բանակցային գործընթացի մի մաս՝ կողմերի կարիքների, մտահոգությունների և ակնկալիքների փոխըմբռնման ենթատեքստում:

V. ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

23. Հայտնի են բանակցությունների երկու տեսակ՝

ա) *դիրքային բանակցություն*, որը ներառում է անձի հոգեբանական «ես»-ի վրա հիմնված անձնական մոտեցում՝ սեփական անձի համար լավագույն լուծումը ստանալու ակնկալիքով: Ոստիկանական ծառայության համատեքստում խոսքը վերաբերում է ոստիկանության ծառայողի կողմից քաղաքացիներին իրավական կարգադրագրերի ներկայացմանը, տեղաշարժվելու պահանջին կամ որոշակի վարքագծից զերծ մնալուն: Ասվածը տեղ ունի այն դեպքերում, երբ առկա է ամենօրյա սովորական իրավիճակ, օր.՝ փողոցային վիճաբանություն, ինչը կարող է սուկ ախտանիշ լինել, այլ ոչ թե լուրջ հիմնախնդիր, որը պահանջում է հրատապ լուծում:

բ) *ուղղորդված բանակցություն*, որը հիմնված է «դիվանագիտության» վրա և ենթադրում է ավելի հանդարտ ու տևական մոտեցում: Այս դեպքում լուծումներ գտնելուն ուղղված ջանքերն ու տարբերակները դիտարկվում են փոխադարձ համաձայնության ձեռքբերման ձևաչափով, ինչը իհարկե ունենում է ավելի երկարատև արդյունք: Օրինակ՝ առկա է փոքր միջադեպ. երկու անինք վիճում են ավտոմեքենայի սխալ կայանման շուրջ: Վիճաբանության ընթացքում ժամանում է ոստիկանությունը: Թեև ոստիկանության ծառայողների լիազորությունները ներառում են նմանատիպ խնդիրների անմիջապես լուծումը, սակայն այդ լիազորությունը հայեցողական է: Իհարկե ոստիկանության ծառայողները իրավասու են անմիջապես ձերբակալել հասարակական կարգը խախտող այդ երկու անձանց, սակայն այդ դեպքում փողոցում կայանած ավտոմեքենայի խնդիրը կմնա չլուծված: Այս պարագայում խորհրդատվելի է հետևյալ գործելաոճը՝ ոստիկանության ծառայողները զերծ են մնում այդ անձանց ձերբակալելուց, հորդորում են դադարեցնել ագրեսիվ վարքագիծը, հեռացնում են նրանց միմյանցից, առանձին-առանձին զրուցում և պար-

զաբանում վեճի լուծման այլընտրանքային հնարավորությունները: Այնուամենայնիվ՝ միշտ էլ լինում են այնպիսի իրավիճակներ, երբ բանակցությունների դիրքային մոտեցումը անհրաժեշտ է կիրառել անմիջապես /օր.՝ անձանց ինքնաբուխ գործողությունների, անկարգությունների ժամանակ/, երբ դժվար է ներգրավվել որևէ ողջամիտ երկխոսության մեջ, սակայն հնարավորության դեպքում ուստիկանական միջամտության ենթատեքստում նախըտրելի է բանակցությունների ուղղորդված մոտեցումը: *Ուղղորդված մոտեցումը լավագույն տարբերակն է պլանավորված կամ երկարատև միջոցառումների ընթացքում բանակցելու դեպքերում:*

Այսպիսով՝ «ուղղորդված բանակցությունների» մոդելի 1-3-րդ քայլերը վերաբերվում են «բանակցությունների պլանավորմանը», 4-5-րդ քայլերը՝ բանակցությունների անցկացմանը և 6-րդ քայլը՝ բանակցությունների ավարտին ու արդյունքների վերլուծությունը:

ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ 6 ՔԱՅԼԱՆԻ ՄՈԴԵԼԸ

24. **Քայլ 1.** Պատրաստեք տեղանքը, միջանձնային կապեր հաստատեք կողմերի հետ՝ հարաբերությունները սկսելու նպատակով: Որոշեք, թե երբ, որտեղ և ինչպես են տեղի ունենալու բանակցությունները:

Քայլ 2. Տեղեկացեք հակոտնյա դիրքորոշումներին, անգամ, եթե համաձայն չեք դրանց հետ: Պարզեք հիմնախնդրի ծագումը և, անհրաժեշտության դեպքում, փորձեք «ձեզ» դնելով «դիմացինի» տեղը՝ հաշվի առնելու կողմի տեսակետներն ու առաջարկությունները: Ողջամիտ ժամկետում փորձեք տեղեկություններ հավաքել մյուս կողմերի, նրանց դժգոհությունների մասին և փորձեք կանխագուշակել նրանց նպատակները: Ճշտեք. առկա են արդյոք նախորդ բանակցությունների վերաբերյալ որևէ տվյալներ:

Քայլ 3. Ճշտեք կոնկրետ այն հարցերը, որոնք հանդիսացել տվյալ հիմնախնդրի բուն պատճառը, որպեսզի ավելի լավ կարողանաք պարզաբանել բանակցությունների նպատակը: Ուսումնասիրեք ինչպես լուրջ տեղեկությունները /օր.՝ օպերատիվ տվյալները/ այնպես էլ մանր հարցերը /օր.՝ մյուս կողմի՝ բանակցություններ վարող անձի վերաբերյալ տեղեկատվությունը/: Հաստատեք, թե *նստիկանություն-գործընկեր* տեսանկյունից բանակցությունների ո՞ր ասպեկտներն են ավելի կարևոր՝ նախընտրելի արդյունքները, ընդունելի արդյունքները կամ անընդունելի արդյունքները:

Քայլ 4. Որոշեք՝ արդյունքները նախընտրելի են երկու կողմերի համար թե միայն ձեր համար. հասկանալի է, որ որոշ տարբերակներ կարող են ավելի նախապատվելի լինել կողմերից մեկի, իսկ որոշները՝ մյուս կողմի համար, սակայն ինչպես նշվեց, կարևոր է հասնել երկուստեք ընդունելի արդյունքների:

Քայլ 5. Ուսումնասիրեք առկա առաջարկները և փորձեք ձևակերպել այլընտրանքներ կամ հնարավոր տարբերակներ. առանձնացրեք բանակցություններում ներգրավված յուրաքանչյուր կողմի համար նախընտրելի առաջարկի լավ և վատ արդյունքները, սակայն եղեք անկողմնակալ և ընդունեք կենսագործելի լուծումներ:

Քայլ 6. Համաձայնության եկեք ձեռնարկվելիք գործողությունների շուրջ և գնահատեք ձեռք բերված հաջողությունը: Դա կարող է լինել բացարձակ կամ որոշակի փոխզիջում, սակայն պետք է ունենալ հստակ պատկերացում, թե ինչ է հաջորդելու բանակցություններին, կողմերը փաստացի կատարում են իրենց պարտավորությունները թե ոչ, համաձայն են արդյոք անհրաժեշտության դեպքում ներգրավվել նոր բանակցությունների և այլն:

Դիտողություն. Եթե ակնկալվում են հետագա բանակցություններ, ապա կրկին վերադարձեք 1-3-րդ քայլերին՝ վերստին պլանավորելով բանակցային գործընթացը: Մի վերադարձեք անմիջապես 4-5-րդ քայլերին, քանի որ իրավիճակի հանգամանքները կարող են փոխված լինել կամ միջոցառման ընթաց

քում կամ բանակցությունների ժամանակ ստացված տեղեկությունների արդյունքում, ինչը և կարող է ազդել ձեր մոտեցման կամ դիրքորոշման վրա: Օրինակ՝ 6 քայլանի ուղղորդված մոտեցման իրականացման վրա իր ազդեցությունը կթողնի ռեալ իրականությունը, որը կհուշի, թե հատկապես որ քայլերի վրա պետք է ավելի մեծ ուշադրություն դարձվի:

VI. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍ 1. ԱՌՕՐՅԱ ՏԱՐԵՐԱՅԻՆ ՓՈԽՇՓՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ԱՄԵՆՕՐՅԱ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

25. Հաղորդակցման միայն 7%-ն է ուղղակի բանավոր, մնացածը բաղկացած է հնչերանգից՝ 38% (ինչպես է հնչում ուղերձը կամ ինչպիսի հնչերանգով է արտաբերվում) և վերջապես՝ ոչ խոսքային նշանները՝ 55% (լեզվի օգտագործումը), հետևաբար, պարզ է, որ քաղաքացիների հետ ունեցած շփումների մեծ մասի պարագայում կարևոր է, թե ինչպես են ներկայանում ոստիկանության ծառայողները, ինչպիսի գործողություններով և վարքագծով, և ոչ թե սոսկ ուղերձի բովանդակությունը, օրինակ՝ հենց ոստիկանության ծառայողները ժամանում են դեպքի վայր, այդ պահից ի վեր նրանք գտնվում են ուշադրության կենտրոնում. արդյո՞ք նրանք ժամանում են ոստիկանական ավտոմեքենայի փարոսիկները միացրած, լույսերը վառած և ագրեսիվ բոլակոցներով: Երբ ոստիկանության ծառայողները դուրս եկան ավտոմեքենա-

յից, արդյո՞ք նրանք ունենին պրոֆեսիոնալ և կոկիկ արտաքին և հարգալից էին ներկաների հետ, արդյո՞ք ներկայացան պատշաճ ձևով և սկսեցին համապատասխան հաղորդակցությունը դեպքի մասնակից անձանց հետ կամ արդյոք ոստիկանության ծառայողների թիվը չափից ավելի մեծ էր, կամ արդյո՞ք նրանք գորգոռում կամ վիճում էին խնդրի տարբեր դրսևորումների շուրջ կամ ներկա գտնվող անձանց հետ, թե արհեստավարժ մոտեցում էին ցուցաբերում: Այս բոլոր գործոնները օբյեկտիվորեն ազդում են ոստիկանության նկատմամբ դեպքի վայրում ներկա անձանց արձագանքի ձևավորման վրա: Սա իրականացնելու պարզ մոդելը հետևյալն է՝ ոստիկանության վերաբերմունքը որոշակի դեպքի, դրա բնույթի, ներառյալ ներկա անձանց նկատմամբ անպայման ազդեցություն կթողնի նրանց նկատմամբ ցուցաբերվող վարքագծի վրա, մյուս կողմից՝ ոստիկանության նկատմամբ մարդկանց վերաբերմունքի վրա ազդեցություն կթողնի հենց նոր ցուցաբերած վերաբերմունքը, իսկ այս ամենը կազդի մարդկանց կողմից ցուցաբերվող վարքագծի վրա: Այսպիսով՝ գործընթացը կշարունակվի «փոխադարձաբար», իսկ շրջանը կշարունակի ծավալվել կամ փոքրանալ՝ կախված ոստիկանության և քաղաքացիների փոխշփումների բնույթից: Եթե ոստիկանության ծառայողները ցուցաբերեն ազդեցիկ վարքագիծ, անտարբերություն դրսևորեն կողմերի դիրքորոշումների նկատմամբ կամ մերժեն լսել ծագած պրոբլեմի էությունը, իրավիճակը կորող է բարդանալ, իսկ եթե ոստիկանության ծառայողները դրսևորեն արհեստավարժ մոտեցում և նորմալ հաղորդակցվեն միջացառմանը ներգրավված անձանց հետ, դա կնվազեցնի իրավիճակի լարվածությունը՝ ավելի հեշտացնելով հետագա շփումներն ու բանակցությունների ընթացքը:

Ասվածը հավասարապես վերաբերում է թե տարերայնորեն ստեղծված իրադրություններին և թե պլանավորված միջոցառումներին, ուղղակի պետք է նախքան բանակցությունների որևէ տեսակի ձեռնարկումը ջանալ, որ հաղորդակցության ոճը համապատասխանի բանակցությունների անհրաժեշտ ընթացքի հետ:

26. Իրավիճակի տարերային բնույթը հաճախ դժվարացնում է հաղորդակցումն ու բանակցությունները, սակայն մի քանի հիմնական խորհրդատվելի մոտեցումներ կօգնեն ուստիկանության ծառայողներին՝ արհեստավարժ կերպով մոտենալ իրադրությանը՝ մեծացնելով հաջող արդյունքի հնարավորությունը: Արդունավետ է հանդիսանում ընդհանուր խմբից բանակցություններում ներգրավված անձանց առանձնացնելը մյուս մասնակիցներից այլ անձանցից, որոնք կարող են միջամտել բանակցային գործընթացին, սակայն դա պետք է անել սահուն և քաղաքակիրթ կերպով, որպեսզի չստեղծվի ավելորդ լարվածություն կամ դժգոհություն: Ամեն դեպքում հարկավոր է գործել խիստ հավասարակշռված և զգույշ, օրինակ՝ նախապես պետք է պլանավորել, թե ով է նախաձեռնելու բանակցությունների սկիզբը, քանի որ անցանկալի և խանգարող է, երբ ուստիկանության մի քանի ծառայողներ միաժամանակ ներգրավվում են նույն երկխոսությանը, կամ ուստիկանության նոր ժամանած ծառայողներն անմիջապես սկսում են միջամտել դեպքին՝ անհարկի սկսելով միևնույն քննարկումը:

**ՄԱՍ 2. ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՍ ՏԱՐԵՐԱՅՆՈՐԵՆ
ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ (ՄԻՏԻՆԳՆԵՐ, ՅՈՒՅՅԵՐ,
ԶԱՆԳՎԱԾՍՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԱՆՑԿԱՅՎՈՂ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

27. Անհապաղ բանակցություններ վարելու լիազորությունները սովորաբար տրվում են զանգվածային անկարգությունների կանխման և հասարակական անվտանգության ապահովման նպատակով ստեղծված հատուկ նշանակության ստորաբաժանման հրամանատարին: Հիշյալ ստորաբաժանման կազմում ստեղծվում է *հատուկ համահավաք ջոկատ* (ՀՀՋ), որի կազմում

գործում է բանակցություններ վարող խումբը: ՀՀՋ-ի հրամանատարը ենթարկվում է միջոցառման պաշտոնական ղեկավարին և նրա ցուցումով սկսում բանակցությունների վարումը: Կախված իրադրությունից և անհրաժեշտությունից, ցանկացած անձ միջաջառման ղեկավարի թույլտվությամբ որպես «մասնագիտացված ռեսուրս» կարող է ստանձնել «պաշտոնական բանակցությունները» վարողի դերը:

28. Հարկ է փաստել, որ ոստիկանությունը ոչ միշտ է հանդիսանում ամենահամապատասխան կողմը՝ պաշտոնական բանակցությունների անցկացման համար: Ոստիկանության հիմնական դերը հասարակական կարգը պահպանելը, հասարակական անվտանգությունն ապահովելը և իրավախախտումները կանխելն է, ու թեև ոստիկանության ծառայողները հիշյալ խնդիրների իրականացմանը հասնում են միջոցառման կազմակերպիչների և ամբոխի ներկայացուցիչների հետ հաղորդակցվելով, այդուհանդերձ՝ ներկա անձանց կամ միջոցառման մասնակիցների կողմից առաջադրվող հիմնախնդիրները կարող են ընդհանրապես չառնչվել օրենքով ոստիկանության առջև դրված խնդիրների իրականացման հետ (օր.՝ զանգվածային անկարգությունները կամ դժգոհությունները կարող են ծավալվել վառելիքի կամ այլ ապրանքների գնի բարձրացման հետ կապված հարցերի շուրջ): Այստեղ իհարկե կարևոր է, որ ոստիկանությունը իրավիճակը պահի իր հսկողություն տակ և թույլ չտա կատարել իրավախախտումներ, սակայն գործընթացի վերջնական հաջողությունը առավել հավանական կլինի, եթե դժգոհող խմբերի հետ բանակցությունները անմիջականորեն վարեն հիշյալ թանկացումների որոշումը կայացրած պատասխանատուները: Նույն կերպ խնդիրը կարող է կապված լինել փողոցային առևտրի սահմանափակումների շուրջ քաղաքապետարանի կայացրած որոշման հետ: Այստեղ ևս ոստիկանության գործողությունները ուղղակի պետք է հուսալի պատվար հանդիսանան համապատասխան պաշտոնյաների և բողոքող անձանց խմբի միջև նորմալ բանակցային գործընթաց ապահովելու համար:

**VII. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ,
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

29. Ոստիկանական ծառայության ողջ ընթացքում բանակցություններ վարելու հմտությունները պետք է կազմեն ոստիկանության ծառայողների վերապատրաստման բաղկացուցիչ մասը, ինչը հնարավոր է ապահովել մշտապես կազմակերպվող վերապատրաստման դասընթացների միջոցով՝ հատկապես նոր ծառայության անցած աշխատողների համար: Օրինակ՝ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց համար անհրաժեշտ կլինի պաշտոնական միջավայրի ավելի շատ տեխնիկական վերապատրաստում, քան ոստիկանության կրտսեր աշխատակիցների պարագայում:

30. Բարդ իրավիճակներում, ինչպես օր՝ զանգածային անկարգությունների դեպքում, ոստիկանության ծառայողին բանակցություններ վարողի դերը հանձնարարել նրա պաշտոնով կամ կոչմամբ պայմանավորված, անթույլատրելի է: Բանակցություններ վարելու կարողությունը տվյալ անձի՝ հաղորդակցվելու, իրավիճակին ներգավվելու, նախաձեռնողականության և ճկունության միջոցով հստակ որոշումներ կայացնելու հմտություններն ու անձնական ունակություններն են: Թեև բանակցություններ վարող անձանց համար պետք է կազմակերպվեն պրոֆեսիոնալ դասընթացներ, այդուհանդերձ, պահանջվում է, որ տվյալ անձինք ունենան արդյունավետ բանակցություններ վարելուն անհրաժեշտ անհատական որակներ, կայուն խառնվածք և բնավորություն, որոնց վրա հիմնված էլ պետք է կատարվի այդ անձանց նախնական ընտրությունը: Հետագայում, կոկնկրետ իրավիճակում բանակցություններ վարող ծառայողին ընտրելիս հարկ է հաշվի առնել անցկացվող միջոցառման առանձնահատկությունները, ներկա անձանց շրջանում տվյալ ծառայողի ունեցած հեղինակությունը, խոսքի կշիռը և այլն:

31. Ոստիկանության այն ծառայողները, որոնք բանակցություններ վարելու պատասխանատվությունը ստանաձնում են առավել բարդ իրադրություններում, օր. պատանդներ վերցնելու հետ կապված կամ հրազենի գործադրմամբ բարդ դեպքերում, երբ անձանց կյանքին և առողջությանը սպառնում է իրական վնաս, պետք է ունենան նաև հոգեբանական լուրջ պատրաստվածություն և ձեռնահասություն, անցած լինեն վերապատրաստման առավել բարդ և մանրամասն ծրագիր՝ ձեռք բերելու «հավատարմագրված բանակցություններ վարող անձ»-ի մակարդակ, ինչը ներառված չի սույն ուղեցույցի շրջանակներում:

VIII. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ ԲԱՐԴ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

32. Զանգվածային անկարգությունները որպես կանոն ծագում են տարերայնորեն կամ առանց ակնհայտ լուրջ պատճառների, այնուամենայնիվ դրանց նախորդում են պլանավորված մանր միջոցառումներ և լոկալ անկարգություններ, որոնց աստիճանական զարգացումը հանգեցնում է բարդ և լարված ավելի մեծ անկարգությունների: Այսպիսով՝ նման իրավիճակներում մեծմասամբ ժամանակ է լինում բանակցային ռազմավարություն և պլան մշակելու համար:

33. Ոստիկանական պրակտիկայում կա թյուրըմբռնում այն մասին, որ մարդկային ամբոխը անկանխատեսելի է, անկայուն և վտանգավոր, հետևաբար՝ մշտապես անհրաժեշտ է ոստիկանական ներկայություն, անընդհատ հսկողություն, ինչու ոչ ուժային միջամտություն: Այս մոտեցումը սակայն ներկայումս հնացած է և գիտականորեն չհիմնավորված: Արդի պրակտիկայի մեջ այս ոլորտում առաջատար տեսությունը *ընդլայնված սոցիա-*

լակյան ինքնության մոդելն է, որի շրջանակներում ընդունվում է այն իրողությունը, որ ամբոխը կազմած է շատ խմբերից, որոնք թեկուզև կարող են ունենալ միևնույն մտահոգություններն ու պահանջները, սակայն նրանց կողմից ձեռնարկվող գործողությունները և վարքագիծը կարող է լինել խիստ տարբեր: Այս առթիվ արվում է եզրահանգում, որ ոստիկանության ծառայողների կողմից ուժի կամ հարկադրանքի ոչ իրավաչափ կամ անհիմն ցանկացած կիրառություն իր բացասական ազդեցությունն է ունենում ամբոխի տրամադրությունների հետագա զարգացումների վրա՝ անջատ խմբերից շատերին միավորելով միասնական ամբոխի կազմում: Մրա արդյունքում արդեն՝ դժգոհողների վարքագիծը կարող է «սուր ծայրով» ուղղվել ոստիկանության դեմ:

34. Ամբոխային տրամադրվածությունների հետագա զարգացումները լավագույնս կարող են վերահսկվել միայն ուժի և այլ հարկադրանքի միջոցների համաչափ (իրավաչափ) կիրառման, աստիճանականությունը պահելու, տեղեկատվությունը պատշաճ տարբերակելու և գնահատելու և այլ հիմնավոր գործողություններ իրականացնելու միջոցով:

IX. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

35. Բոլոր պլանավորված միջոցառումները պետք է նախապես ունենան մասնակիցների հետ հաղորդակցման և փոխշփումների ռազմավարություն, որում ներառվում է ինչպես ամբողջ միջոցառման, այնպես էլ դրան նախորդող և հաջորդող ժամանակահատվածում հաղորդակցման (բանակցություններ վարելու) փուլային լուծումները: Տարերայնորեն ծագած լայնածավալ միջոցառման ժամանակ պետք է արագ մշակվի հաղորդակցման ռազմավարություն՝ ուղղված ոստիկանության ու շահագր-

գիտ կազմակերպությունների և ուժերի կողմից համատեղ գործողությունների ձեռնարկմանը: Նշված հաղորդակցման ռազմավարությունը պետք է սերտ կապ ունենա բանակցություններ վարելու ռազմավարության հետ:

36. Իր հերթին՝ բանակցություններ վարելու ռազմավարությունը պետք է համաձայնեցվի գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ, (օրինակ՝ համապատասխան ոլորտների ծառայությունների, քաղաքապետարանի): Բանակցություններ վարելու ռազմավարությունը հստակ սահմանագծում է բանակցություններ վարող անձի գործողությունները, ըստ որի՝ նա պետք է իրականացնի իր առջև դրված խնդիրները Մա կարող է թվալ գործողությունների անհարկի բացահայտ իրականացում, սակայն բանակցություններ վարող անձին չպետք է թույլատրել գործել շահագրգիռ կողմերի հետ ձեռք բերված համաձայնությունների (հաղորդակցման ռազմավարության) շրջանակից դուրս, ավելին՝ ուստիկանության գործողությունները ողջ ընթացքում պետք է համապատասխանեն ռազմավարության պահանջներին:

37. Կարևոր է ուստիկանության և շահագրգիռ կողմերի միջև նախապես համաձայնության գալ հետևյալի հարցերի շուրջ.

ա) բանակցությունների արդյունքում ստացված նախընտրելի արդյունքը,

բ) բանակցությունների արդյունքում ստացված ընդունելի արդյունքը,

գ) բանակցությունների արդյունքում ստացված անընդունելի արդյունքները,

38. Նկարագրված ռազմավարության ընդհանուր տրամաբանության և ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա բանակցություններ վարող անձը պետք է մշակի բանակցություններ վարելու պլան, ինչը պետք է հաստատվի համապատասխան առաջադրանք ստացած ստորաբաժանման հրամանատարի կողմից, օրինակ՝ ընթացող բանակցությունների ժամանակ ուստիկանությունը խոստանում է հավաքը կամ երթը խաղաղ անցկացնելու դեպքում նվազեցնել ներգրավված ուստիկա-

նության ծառայողների թիվը և չգործադրել հատուկ միջոցներ: Այնուամենայնիվ, չդիմանալառվ լարվածությանը, ոստիկանության հատուկ ստորաբաժանման մի խումբ ծառայողներ առաջ են շարժվում և իրականացնում մի շարք ձեռքարկություններ: Այս դեպքում դա անմիջապես կասկածի կոնի հետագա նպատակալին բանակցությունների ընթացքը: Նմանապես, եթե բանակցություններ վարող անձը խոստանում է, որ ոստիկանության ծառայողներն այլևս չեն առաջանա դեպի ամբոխը, սակայն տվյալ հատուկ միջոցառման օպերատիվ ղեկավարը շահագրգիռ կողմերի համաձայնությամբ որոշում է կայացրել ամբոխը ցրելու մասին, ապա այս չհամաձայնեցված գործողությունները ևս խիստ բացասական կազդեն բանակցությունների հետագա արդյունավետության վրա, իսկ այս ամենը կհանգեցնի ոչ միայն տվյալ միջոցառման այլ նաև հետագա միջոցառումների շրջանակներում ոստիկանական գործողությունների նկատմամբ անվստահության և անաազնվության մթնոլորտի ձևավորմանը:

X. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

39. Հաղորդակցության ռազմավարության մշակումը կարևոր է ցանկացած պլանավորված բանակցությունների անցկացման համար, քանի որ ինչպես նշվեց, նրանում նախանշվում են այն բոլոր չափանիշները, համաձայն որոնց իրենց գործողություններն են իրականացնում բանակցություններ վարող անձինք. բացի դա, ռազմավարությունը կարող է նպաստել նաև բանակցային գործընթացի որոշ տեխնոլոգիական ասպեկտների, օրինակ՝ SMS հաղորդագրությունների տեխնոլոգիայի միջոցով հաղորդագրություններ ուղարկել հավաքի մասնակիցներին, սոցիալական ցանցերի և որոշ կայք-էջերի օգտագործումը, որոնց միջո-

ցով կարելի է փորձել շփում հաստատել կամ կոչեր ուղղել (բանակցել) ամբոխի կամ նրա ներսում գործող խմբերի հետ, օրինակ՝ մարդկանց մեջ կարելի է շրջանառել լուրեր, որ ամբոխը ցրելու մասին տեղեկությունները կեղծ են և հավաստիացնել, որ ոստիկանությունը թույլ կտա շարունակել հավաքը, եթե այն շարունակվի խաղաղ կերպով:

XI. ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

40. Ստեղծված իրադրությունում հավաքված ամբոխի ներկայացուցիչները այլևայլ պատճառներով կարող են հրաժարվել ոստիկանության կամ պետական իշխանության այլ ներկայացուցիչների հետ հաղորդակցվելուց (բանակցելուց): Նման իրավիճակներում ճիշտ կլինի «երրորդ» կողմի ներկայացուցիչների, օր. *անկախ միջնորդների* ներգրավումը բանակցությունների գործընթացին. պետք չէ խուսափել հիշյալ անձանց ներգրավումից, որովհետև բանակցություններ վարելու բուն նպատակը հիմնախնդիրը լուծելն է:

XII. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

41. Լայնածավալ միջոցառումների ընթացքում հաճախ ներգրավված են լինում միաժամանակ մի քանի պետական կառույցներ և ծառայություններ, որոնք որպես գործընկերներ կիսում են պատասխանատվությունը յուրաքանչյուրը իր գործառնությամբ պարտականությունների և ստանձնած դերի շրջանակ-

ներում: Ուղեցույցում արդեն հիշատակված Փոխըմբռնման հուշագրերի պատրաստումը նախքան հիմնախնդրի ծագումը՝ նվազեցնում է գործընկերների միջև հնարավոր անհամաձայնությունները և տարակարծությունները, երբ առաջանում է հիմնախնդրի լուծումներ գտնելու կամ բանակցություններ սկսելու անհրաժեշտություն: Փոխըմբռնման հուշագրի այլընտրանքային տարբերակ է *«մտադրությունների մասին հայտարարությունը»*, որը պատրաստվում է գործընկերների միջև առ այն, թե լուծումներ փնտրելիս ինչպես պետք է ապահովել առաջընթացը կամ կողմերի միջև ինչպես կարելի է հասնել համընդհանուր լուծումների ու փոխհամագործակցության:

42. Ցանկացած Փոխըմբռնման հուշագրում հստակ պետք է սահմանվի, թե որ իրավիճակներում և ինչ հանգամանքներում որ ծառայությունը (գործակալությունը) պետք է ստանձնի բանակցություններ վարողի դերը: Հաճախ ստացվում է այնպես, որ ստեղծված դրությունում բանակցությունների վարման հիմնական միջնորդի դերը կատարում է ոստիկանությունը, մինչդեռ հիմնախնդրի լուծումը վերաբերվում է այլ ծառայությունների իրավասությանը, օր.՝ հանրային կամ սոցիալական ոլորտի ծառայությունների մատուցումը քաղաքապետարանի (թաղապետարանների) կողմից և այլն:

XIII. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՉՆԵՐԻ ՀԵՏ ՍԵՐՏ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

43. Բանակցությունները կարող են էապես նպաստել բախումային իրավիճակների հարթման գործընթացին և նվազեցնել ոստիկանության կողմից ուժի կիրառման անհրաժեշտությունը, ինչը անշուշտ դրական արդյունք է: Բանակցությունները կարող են նաև աջակցել միջոցառման ընթացքում ոստիկանական ծա-

ռայությունների մատուցման որակի բարելավմանը և ոճի ընտրությանը, դրանով հանդերձ՝ ոստիկանության ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը:

44. Միջոցառումների կազմակերպիչները պարտավոր են առաջնորդվել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներով, որոնք հստակ սահմանում են ցանկացած միջառաջման անցկացման, կազմակերպման և դրանց մասին նախազգուշացնելու անհրաժեշտության կարգը:

45. Ընդհանուր առմամբ՝ միջոցառումների անցկացման մասին *նախազգուշացման – ծանուցման* ոլորտում Քաղաքապետարանի (կամ համապատասխան պաշտոնատար անձանց) գործողությունների պրակտիկայի գնահատականը դրական է և առկա է համապատասխանություն միջազգային՝ մոտեցումների հետ, սակայն այս գործընթացը պետք է ծավալվի՝ ապահովելու, որ ոստիկանությունն ու կազմակերպիչները միմյանց հետ ունենան «ամուր» և «կայուն» հարաբերություններ, այլ ոչ թե հանդիսանան սոսկ տեղեկացման գործընթացի կողմեր: Քաղաքապետարանը անհրաժեշտության դեպքում պետք է այս գործընթացում միջնորդ հանդիսանա՝ ապահովելով, որ նախքան միջոցառումը ոստիկանության և կազմակերպիչների միջև փոխհամաձայնեցվեն որքան հնարավոր է շատ հարցեր, տրվեն պարզաբանումներ և այլն, որ շահագրգիռ կողմերը շարունակեն աջակցել միմյանց ոչ միայն միջոցառման ընթացքում, այլև դրա-նից հետո: Ձեռք բերվող համաձայնությունները կարող են տարբեր լինել, օր.՝ բազմության մեջ առկա են իրավախախտման հակված անձինք. կազմակերպիչների համաձայնությամբ ոստիկանությունը նախաձեռնում է նշված անձանց մեկուսացումը, իսկ կազմակերպիչները հորդորում են ակտիվիստներին՝ ադեկվատ լինել ոստիկանության գործողությունների նկատմամբ: Փոխհամաձայնության ձեռք բերման այս պարզ մոտեցումը ցայտուն դրսևորում է միջոցառումների ժամանակ ոստիկանական ծառայությունների մատուցման ժամանակակից մոտեցման էությունը:

XIV. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

46. Ոստիկանության ծառայողները նախապես պետք է պլանավորեն բանակցությունների բոլոր հնարավոր ձևաչափերը՝ հաշվի առնելով հնարավոր միջոցառումների տարաբնույթ տեսակները, այլ ոչ թե արձագանքեն ըստ անհրաժեշտության: Խնդրի լուծման նպատակով հարկ է հստակ տարբերակել միջոցառումների ընթացում հնչեցվող դժգոհությունների և բողոքների բնույթը և կազմակերպիչների ու ոստիկանության փոխընկալման տարբեր մակարդակները:

47. Ընդունված է առանձնացնել հավաքների /ցույցերի/ կամ «բողոքի ակցիաների» երկու տեսակ՝

ա) Զսպված (կայուն) խմբեր, որոնք սովորական (ստանդարտ) մասնակցություն են ցուցաբերում հավաքներին կամ միտինգներին, միջոցառումների ընթացքում ունեն կայուն և կանխատեսելի վարքագիծ, սովոր են ոստիկանության ներկայությամբ (ծառայությունների մատուցմանը), նորմալ փոխհարաբերվում են ոստիկանության ծառայողների հետ և առաջադրում ողջամիտ պահանջներ: Այս դեպքում ճշգրիտ հայտնի է ոստիկանության միջամտության աստիճանը, հնարավոր արձագանքը և զարգացումները:

բ) Կարգազանց (իրավախախտ) խմբեր. սրանք տրամադրված են անհանդուր-ժողական, ունեն անկանխատեսելի և անկայուն վարքագիծ, կռվարար են, ծայրահեղական տրամադրություններով զինված, երբեմն կատաղի, օր.՝ դիմում են նստացույցերի, հրաժարվում հաղորդակցվելուց, հակված են ավերածություններ անելու, այլ կերպ ասած՝ խիստ դժվար է կանխատեսել ոստիկանական միջամտության աստիճանը, առավել ևս՝ հնարավոր արձագանքները:

XV. ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂ ԽՄԲԵՐԸ
ԿԱՄ ԱՍԲՈՒՆԵՐԸ

48. Արդեն նշվել է, որ բանակցություններ վարելու մոտեցումը ընտրելիս կարևոր է նախապես հասկանալ, թե ում հետ ոստիկանությունը գործ ունի և ով է պատրաստվում մասնակցել բանակցային գործընթացին: Անհնար է մեխանիկորեն ենթադրել, որ կազմակերպիչները անպայման կմասնակցեն բանակցություններին, հատկապես այն դեպքերում, երբ ամբոխի ուշադրությունը արդեն սևեռված է դեպի ոստիկանության գործողությունները: Դեպքի վայրում տեղակայված ոստիկանության ծառայողների ներգրավվմամբ անհրաժեշտ նախ հայտնաբերել խմբի կամ ամբոխի հնարավոր կազմակերպիչներին (ներկայացուցիչներին): Հանգամանքները կարող են դասավորվել հետևյալ կերպ.

ա) ակնհայտ է, որ կա կազմակերպիչ, սակայն նրա ինքնությունը պարզված չէ կամ նա քողարկվում է.

բ) կազմակերպիչը հայտնի է և դեմ չէ միջոցառմանը ոստիկանության ներգրավելուն.

գ) կազմակերպիչը հայտնի է և չեզոք է ոստիկանության միջամտության նկատմամբ.

դ) կազմակերպիչը հայտնի է, սակայն դեմ է ոստիկանության ներկայությանը.

ե) կազմակերպիչ չկա, և ամբոխը հակված է հաղորդակցվել ոստիկանության հետ.

զ) կազմակերպիչ չկա, և ամբոխը հակված չէ հաղորդակցվել ոստիկանության հետ.

է) կազմակերպիչը հայտնի է, սակայն ամբոխում կան իրավախախտումների կատարմանը հակված անձինք, որոնք հրահրում են այլոց, բայց կազմակերպիչը կարող է ազդել նրանց վարքագծի վրա.

ը) կազմակերպիչը հայտնի է, սակայն ամբոխում կան իրավախախտումների կատարմանը հակված անձինք, որոնք հրահրում են այլոց, բայց կազմակերպիչը չի կարող ազդել նրանց վարքագծի վրա.

թ) ինքնաբուխ կամ տարերային տեղի ունեցող իրավախախտումներ (անկարգություններ), որտեղ հավանական է կազմակերպիչ չկա:

ՕՊԵՐԱՏԻՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

49. Օպերատիվ տվյալները կարևոր են բանակցությունների հաջող ընթացքի և բանակցություններ վարող անձի գործողությունների հստակ պլանավորման համար: Տարբեր աղբյուրներից ստացվող օպերատիվ տվյալների հետ պետք է համադրել նաև կոնկրետ ցուցարարների խմբի վերաբերյալ հետազոտությունը, մասնավորապես՝ նախկինում նրանց ցուցաբերած վարքագիծը, նախորդ փորձի դրական և բացասական արդյունքները, սրան գումարած հնարավոր արձագանքի կանխատեսումը:

ՀԱՄԱՅՆՔԻ (ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ) ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

50. Ոչ բոլոր միջոցառումներն (անկարգությունները) են տեղի ունենում նախապես սահմանված վայրերում (հասարակական վայրեր կամ բացօթյա տարածքներ). դրանք հաճախ տեղի են ունենում քաղաքի շրջաններում: Կարևոր է, որ ոստիկանությունը նախապես ընտրի համայնքային միջնորդների (հաշտարարնե-

րի), որոնք կարող են զսպել կամ մեղմել բախումները, հերքել ասեկոսենները, պարագաբանումներ և իրազեկումներ տան կատարվածի շուրջ, նպաստեն լարվածության թուլացմանը կամ հող նախապատրաստեն դժգոհողների հետ բանակցություններ վարելու համար: Որպես այլընտրանքային տարբերակ, եթե ստեղծված իրավիճակում առկա է ակնհայտ բացասական կամ անհանդուրժողական վերաբերմունք տվյալ տարածքի ոստիկանության ծառայողի ընդհանուր կերպարի նկատմամբ, գործընթացում պետք է ներգրավել այլ տարածքի համապատասխան պաշտոններ զբաղեցնող ոստիկանության ծառայողներ:

XVI. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

51. Բանակցային գործընթացի անհրաժեշտությունը կարող է ծագել ցանկացած պահի՝ թե նախքան միջոցառումը սկսելը, և թե արդեն իսկ սկսված միջոցառման ընթացքում. այնուամենայնիվ՝ առավել ցանկալի վերջնական արդյունքները ձեռք են բերվում այն ժամանակ, երբ տարվա ընթացքում ոստիկանության և կազմակերպիչների միջև արդեն իսկ հաստատվել են փոխընկալման հարաբերություններ: Վերջիններիս առկայությունը միջոցառման ժամանակ դրական է անդրադառնում ոստիկանական ծառայությունների մատուցման բոլոր փուլերում, մասնավորապես.

ա) իրավախախտումների նախականիման, կանխման և խափանման փուլերում, քանի որ ոստիկանական ծառայությունների մատուցման ոճը, ներառյալ ռեսուրսների արդյունավետ տեղակայումը առավելագույնս համապատասխանեցվում է իրադրությանը.

բ) նախքան միջոցառման մեկնարկը գոյություն ունեցող «երկխոսության մթնոլորտը» ապահովելիս, ինչը ոստիկանությանը հնարավորություն է տալիս ռեալ պատկերացում կազմել դեպքերի հնարավոր զարգացման մասին.

գ) միջոցառման ավարտից հետո կազմակերպիչների հետ համառոտ քննարկում անցկացնելիս՝ երբ երկուստեք ներկայացվում են միջոցառման ընթացքում դրսևորված հիմնախնդիրները՝ կապված ոստիկանական ծառայությունների մատուցման կամ ամբոխի ցուցաբերած վարքագծի հետ, որը ի հարկե կարող է էապես ազդել հաջորդ միջոցառման նորմալ ընթացքի և փոխընկալման հարաբերությունների պահպանման վրա:

XVII. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԶՈՂ ԸՆԹԱՑՔԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

52. Ինչպես ոստիկանության գործունեության բոլոր ոլորտներում, այնպես էլ բանակցությունների վարման գործընթացում միշտ չէ որ ամեն ինչ հարթ է ընթանում: Գոյություն ունեն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտներ, որոնք արգելք են հանդիսանում բանակցությունների արդյունավետ ընթացքի համար: Անկախ դրանց բնույթից, անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հնարավոր արգելքների երևան գալու հնարավորությունը և հստակ պլանավորել ու մշակել դրանց վերացման եղանակները: Այս իմաստով՝ խոչընդոտներ կարող են հանդիսանալ.

ա) միջոցառման ընթացքում զբաղված լինելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված խնդիրների իրականացմամբ, մասնավորապես՝ հասարակական կարգի պահպանմամբ և հասարակական անվտանգության ապահովմամբ, ոստիկանությունը կարող է «հսկողությունից դուրս թողնել» ընդդիմա-

դիր կողմերի միջև առաջացած լարվածությունը և ժամանակին չցուցաբերել «հաշտարար» միջամտություն.

բ) միջոցառման մասնակիցների կողմից ակնկալվող լուծումների ողջամտության աստիճանը և փոխընդունելի արդյունքների հասնելու ռեալ հնարավորությունը.

գ) ոստիկանության և միջոցառման մասնակիցների միջև առկա փոխվստահության աստիճանը՝ կապված նախկինում տեղ գտած շփումների և միջադեպերի արդյունքների հետ.

դ) միջոցառման մասնակիցների կողմից «կամքի» բացակայությունը՝ հասնելու դրական «վերջնական արդյունքի». եթե բանակցային գործընթացի բոլոր կողմերը չեն ցուցաբերում ցանկություն և պատրաստակամություն՝ փոխընդունման գնալ մյուս կողմի դիրքորոշման հետ, շատ դժվար է հասնել արդյունքի.

ե) կողմերից յուրաքանչյուրի՝ առավել կենտրոնացած լինելը իր սեփական խնդիրների լուծման և հաջողության հասնելու վրա (դիրքային բանակցություններ), այլ ոչ թե գնալը փոխշահավետ երկխոսության՝ ուղղված բանակցությունների համընդունելի արդյունքների ձեռքբերմանը (ուղղորդված բանակցություններ).

զ) նախորդ փորձից «դասեր չքաղելու» կողմերի համառությունը և առանց հստակ ռազմավարության նոր միջոցառումներ կազմակերպելը.

է) միջոցառման կազմակերպիչների կամ խմբերի ներկայացուցիչների բացակայությունը, որի հետևանքով բազմությունը առաջնորդվում է ինքնաբուխ և տարերային կերպով, ինչը էապես դժվարացնում է իրադրության կառավարումը.

ը) ոստիկանության կամ գործընկերների կողմից կենտրոնացած լինելը նախընտրելի արդյունքի վրա՝ բաց թողնելով ընդունելի արդյունքը:

XVIII. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

53. Անգամ ամենամանրակրկիտ պլանավորված և մշակված տրամաբանություն ունեցող բանակցությունները՝ նույնիսկ փորձառու բանակցություններ վարող անձանց ներկայությամբ, ենթակա են տապալման վտանգին: Դա կարող է պայմանավորվել վերոնշյալ գործոնների ազդեցությամբ կամ պարզապես անլանելի դրությամբ: Բանակցությունների վարման պլանում պետք է մշակվեն և հաշվի առնվեն մի շարք չնախատեսված հանգամանքներ, մասնավորապես՝

ա) այլընտրանքային պլանի առկայությունը. գործողությունների լրացուցիչ ծրագիրը անհրաժեշտ է միշտ, անգամ, եթե հիմնական պլանը միանգամայն բավարար է լուծելու եղած հիմնախնդիրները և հասնելու նախընտրելի արդյունքի.

բ) խորհրդատվելի չէ ոչ մի պարագայում բանակցություններն ավարտել գայրույթի, սպառնալիքների կամ պատժելու մտադրության նոտաներով, ինչքան էլ դա ջանքեր պահանջի: Դեպքերի և իրադարձությունների ընթացքը հաճախ գլխիվայր փոխվում է և կարող է դժվար լինել բանակցություններին վերադառնալը, եթե նախորդ փորձը ավարտվել է բախումներով.

գ) գործնականում ցանկացած հիմնախնդիր ունենում է մեկից ավելի լուծումներ, որոնց նախընտրելիության հարցը կողմերը ընկալում են տարբեր կերպ: Լուծումներից յուրաքանչյուրի դրական կողմերը համադրելով՝ կարելի է ստանալ առավել ողջամիտ և նախընտրելի լուծում: Արդյունավետ կարող է լինել նաև բանակցությունների ընթացքում գործողությունների հաջորդականությունը հստակեցնելու նպատակով ընդմիջում վերցնելը:

XIX. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

54. Արդի ժամանակաշրջանում բարձր զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների (համացանց, արբանյակային հեռուստատեսություն, ՁԼՄ-ներ և այլն) ընձեռած լայն հնարավորությունները կարող են հաջողությամբ ծառայեցվել ոստիկանության առջև դրված խնդիրները և գործունեության բնագավառները հասարակությանը պատշաճ լուսաբանելու նպատակով: Իր առօրյա աշխատանքում անընդհատ շփվելով բնակչության ամենատարբեր խավերի հետ, ոստիկանությունը մշտապես կատարելագործում է մատուցվող ծառայությունների որակը, որից անմիջականորեն կախված է նրա նկատմամբ հասարակության ունեցած վստահության աստիճանը: Հիշյալ գործընթացի բնականոն ծավալման համար անգնահատելի է լրատվամիջոցների դերը, որոնք իրենց ամենօրյա ուշադրություն կենտրոնում են պահում իրավապահ մարմինների և հատկապես՝ ոստիկանության աշխատանքը:

55. Լրատվամիջոցների «ներուժը» անհրաժեշտ է պատշաճ օգտագործել նաև միջոցառումների կազմակերպման ընթացքում՝ ներառյալ քաղաքացիների շրջանում ոստիկանության և շահագրգիռ կողմերի ուղերձների տարածումը, բացատրական աշխատանքը իրավախախտումների նախականխման գործում և այլ: Տեղեկատվության ազատության և ՁԼՄ-ների գործունեության ոլորտները կարգավորվում են 2003 թվականի դեկտեմբերի 13-ի «Զանգվածային լրատվության մասին» և 2003 թվականի սեպտեմբերի 23-ի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով:

56. Թվային տեխնոլոգիաների արդի շրջանում քաղաքացիները կարող են լրատվության աղբյուրներին տրամադրել ոստիկանության գործողությունների մասին տեղեկատվություն, մեկ-

նաբանություններ և տեսաձայնագրություններ: Ոստիկանությունը իր հերթին պետք է կարողանա ճիշտ ժամանակին ապահովել համապատասխան արձագանք՝ ոստիկանության ՀԿԼ (Հասարակայնության հետ կապի և լրատվության վարչություն) վարչության միջոցով ներկայացնել իրողությունների պաշտոնական մեկնաբանություն և դրանով կանխել լրատվամիջոցներում շրջանավոր հնարավոր ապատեղեկատվությունը (հատկապես լայնածավալ միջոցառումների և զանգվածային անկարգությունների ժամանակ այս ստորաբաժանումը, լինելով ոստիկանության պաշտոնական խոսնակը, պետք է սերտ համագործակցի լրատվամիջոցների հետ, որպեսզի բացառվի տեղեկատվության դիտավորյալ խեղաթյուրումը): Ոստիկանության գործունեության մեջ արմատավորվել է պրակտիկա, որի շրջանակներում, նախքան կազմակերպվող միջոցառման մեկնարկը, նախապես մշակվում և պլանավորվում է լրատվամիջոցների հետ աշխատանքի ռազմավարություն՝ հրավիրելով լրատվամիջոցների ներկայացուցիչներին ճեպագրույցի՝ նպատակ ունենալով պարզաբանել ոստիկանական ծառայությունների մատուցման ոճը, եղանակները, հնարավոր միջամտությունը. անհրաժեշտության դեպքում՝ ապահովվում է նման ճեպագրույցների անցկացումը միջոցառման ընթացքում:

XX. ԿԱԶՄԱԿԵՐՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ (ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ) ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

57. Միջոցառումների ընթացքում մատուցվող ոստիկանական ծառայությունների որակը ավելի բարձրացնելու և աշխատանքի մեթոդների կատարելագործման նպատակով, մանավանդ, երբ երևան են եկել կոնկրետ լուծումներ պահանջող հիմ-

նախնդիրներ, մշտապես իրականացվում է կազմակերպված միջոցառման արդյունքների ամփոփում և օրինականության ապահովմանն ուղղված համապատասխան ստուգումներ: Այս իմաստով խիստ կարևորվում է ողջ միջոցառման արդյունքների փաստաթղթավորումը և հատկապես բանակցություններ վարելու գործընթացի տեսաձայնագրումը, որում ամրագրված կլինեն և պաշտոնական և ոչ պաշտոնական ձևաչափով իրականացված բանակցություններ վարելու բոլոր փորձերը:

58. Նախորդ միջոցառման արդյունքների տեխնիկական ամրագրումը, օր.՝ ոստիկանության գործողությունների վերաբերյալ փաստաթղթերը (տեղեկատվությունը) կարող են մեծ հաջողությամբ օգտագործվել բանակցություններ վարող անձի կողմից բանակցային գործընթացի ռազմավարության մշակման և գործողությունների պլանավորման համար: Տեսաձայնագրումը իր հերթին էապես օգնում է վերլուծել կատարվածը, ոստիկանության ծառայողների գործողություններին տալ օբյեկտիվ գնահատականներ, գտնել կայացրած այս կամ այն որոշման հիմնավորումը կամ հակառակը՝ եզրահանգում անել գործողությունների անիրավաչափության մասին:

59. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի համաձայն՝ ոստիկանությունը հանցագործություններ հայտնաբերելիս և բացահայտելիս իրավունք ունի գրանցելու, լուսանկարելու, ձայնագրելու, տեսանկարահանելու հանցագործության կատարման կասկածանքով բերման ենթարկված, ձերբակալված, հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց, իր գործունեությունը արձանագրելու նպատակով օգտագործելու տեղեկատվական համակարգեր, տեսաձայնագրման, կինո-լուսանկարահանման սարքավորումներ, ինչպես նաև այլ տեխնիկական և հատուկ միջոցներ:

Թեև բանակցությունների վարման գործընթացը տեսաձայնագրելը ընդհանուր առմամբ ցանկալի է, այդուհանդերձ դա պարունակում է որոշակի ռիսկ, հատկապես եթե միջոցառման կազմակերպիչները անհամաձայնություն են հայտնել. այս դեպքում՝

միջոցառման գաղտնի կամ բացահայտ ձայնագրությունը կարող է ավելորդ լարվածություն հաղորդել իրավիճակին (նախընտրելի մոտեցումը հեռու տարածությունից կատարվող տեսաձայնագրումն է):

XXI. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐՈՂ ԱՆՁԱՆՑ

60. Ոստիկանության ծառայողները, ովքեր կոնկրետ իրավիճակում (օր.՝ միջոցառման կամ զանգվածային անկարգությունների ընթացում) ստանձնել են բանակցություններ վարող անձի դերը, այդ ընթացքում պետք է հետևեն մի շարք ցուցումների, մասնավորապես՝

ա) կարևոր է հաշվենկատ կերպով ընտրել բանակցությունների անցկացման ամենահարմար վայրի և ժամանակի ընտրությունը, որտեղ կարող է տեղի ունենալ նորմալ երկխոսություն՝ առանց ուշադրության շեղումների և ամբոխի ագրեսիվ տարրերի: Հրատապ լուծումներ պահանջող իրավիճակներում անշուշտ առավել կարևոր է բանակցությունների անկացման ժամանակի ընտրությունը.

բ) հստակ տարանջատել ոստիկանության հետ բանակցությունների մեջ մտած անձի նկատմամբ ունեցած անձնական դիրքորոշումը առկա հիմնախնդրից, քանի որ ստեղծված իրադրությունում անհապաղ լուծում պահանջում է հենց հիմնախնդիրը: Անհրաժեշտ է բացառել անձնավորված վերաբերմունքը կամ կանխակալ մոտեցումը կողմի (կամ խմբի) հանդեպ, և չշեղվել նշված ուղղությամբ կենտրոնանալուց՝ անկախ անցյալում կամ նախորդ շփումների ժամանակ ունեցած փոխհարաբերությունների (միջադեպերի) բնույթից.

գ) նախապես հստակեցնել դիրքորոշումը առ այն, թե բանակցությունների արդյունքում կոնկրետ ինչ արդյունքների է ցանկալի հասնել, որ հարցերի վերաբերությամբ կարող է ոստի-

կանությունը գնալ զիջումների կամ դրսևորել ճկունություն, իսկ որ դեպքերում՝ ոչ: Բանակցությունների ողջ ընթացքում անհրաժեշտ է ունենալ խնդիրների լուծման այլընտանքային մի շարք մոտեցումներ և օգտագործել դրանցից ամենահամապատասխանը.

դ) կարելի է հոգեբանական փոխշփման միջոցով փորձել հասկանալ այն անձին (անձանց), ում հետ ոստիկանությունը բանակցություններ է վարում, օրինակ՝ ինչ վարքագիծ են նրանք պատրաստվում ցուցաբերել՝ առճակատվել թե դրսևորել հանդուրժողականություն, կամ առկա հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ հակված են բանակցությունների դիրքային թե ուղղորդված մոտեցմանը և այլն:



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Սալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am